Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Գևորգ Գեղամի Հակոբյանի՝ «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» թեմայով ատենախոսության վերաբերյալ
կարծիք.

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, համապատասխանաբար երեք և չորս ենթագլուխներից կազմված երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրներից ցանկից: Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է սեղմագրում:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «Ճշմարիտ և ճշմարիտի հակոտնյա մտակառույցներ»: Այս գլխի առաջին ենթագլխում ատենախոսը պնդում է, թե անհնար է սահմանել ճշմարիտը (և/կամ ճշմարիտի էությունը): Այս ենթագլխում հեղինակի առանցքային պնդումներից մեկը հետևյալն է. «Ինչպես գիտափիլիսոփայական ցանկացած մտակառույցի, այնպես էլ ճշմարտության սահմանումը ենթակա է որակման՝ ճշմարիտ/սխալ տրամաբանական չափման տեսանկյունից» (էջ 26): Սրա հիման վրա հեղինակը պնդում է, որ ճշմարտությունը սահմանելն անհնար է. մենք պետք է փորձենք օգտվել «ճշմարտություն» հասկացության ճշմարիտ սահմանումից, իսկ որպեսզի ճշմարիտ սահմանումը զանազանենք սխալ սահմանումից, արդեն իսկ պետք է իմանանք «ճշմարիտ» հասկացության բովանդակությունը:

Համարելով, որ ցույց է տվել ճշմարիտ հասկացության սահմանման անհնարին լինելը, հաջորդ ենթագլխում ատենախոսն առաջարկում է կենտրոնանալ ոչ թե ճշմարիտի, այլ դրա «հակադեմ» մտակառույցների վրա: Այստեղ նա զուգահեռներ է տանում նեգատիվ աստվածաբանության և իր կողմից առաջ քաշվող մոտեցման միջև: Ինչպես նեգատիվ աստվածաբանության մեջ են հրաժարվում Աստծուն դրական հատկություններ վերագրելուց և փոխարենը ներկայացնում են, թե Աստված ինչպիսին չէ, այնպես էլ հեղինակը՝ համարելով, որ ճշմարիտը սահմանել հնարավոր չէ, առաջարկում է ուշադրություն դարձնել ճշմարիտի՝ իր ձևակերպմամբ, «հակադիր» կամ «հակադեմ» մտակառույցներին: Նա գրում է. «ինչպես Արիոպագիտիկներն են առաջարկում, ճանաչել Աստծուն՝ ժխտելով այն ամենը, ինչ որ Աստված չէ և/կամ Աստծո հատկանիշը չէ, այնպես էլ կարելի է ճշմարիտի նկատմամբ կատարել (գործնականում անվերջ թվով) ժխտում և ժխտականորեն որաշակիացնել ճշմարիտի սահմանները» (էջ 44): Այս քայլի հիմնական շարժառիթը, թվում է՝ հեղինակի վերը ներկայացված այն համոզմունքն է, թե սահմանումներն ունեն ճշմարտության արժեք և հետևաբար, ճշմարիտը կամ ճշմարտությունը սահմանել հնարավոր չէ՝ ցանկացած սահմանում կներառի նույնաբանություն: Ըստ հեղինակի՝ ճշմարիտի հակադեմի կամ հակոտնյայի վրա կենտրոնանալն օգնում է խուսափել այս նույնաբանությունից: Հեղինակի գաղափարը, թերևս հետևյալն է. «Ճշմարտություն է, որ «ճշմարտությունը դատողության համապատասխանությունն է իրականությանը»» արտահայտությունը ներառում է նույնաբանություն, բայց «Ճշմարտություն է, որ «մոլորությունը չի համապատասխանում իրականությանը»» դատողությունը չի ներառում նույնաբանություն: Ուստի, թեև չենք կարող սահմանել ճշմարտությունը, եթե կենտրոնանանք ճշմարիտի «հակադիր մտակառույցների» (էջ 45) կամ «հակադեմ մտակառույցների» (էջ 53) վրա, նույնաբանությունը կհաղթահարենք:

Առաջին գլխի երրորդ և վերջին ենթագլխում հեղինակը որոշակիորեն պարզաբանում է «ճշմարիտի հակոտնյա մտակառույց» և «ճշմարիտի հակադեմ» հասկացությունները: «Սուտը», «ոչ ճշմարիտը», «մոլորությունը», «միֆը», «նարատիվը» և այլն նա համարում է ճշմարիտին հակադեմ մտակառույցներ: Նա ներմուծում է «ճշմարիտի հակոտնյա» հասկացությունը, որը, ըստ հեղինակի սեռային մի հասկացություն է, որը ներառում է «ճշմարիտին հակադրվող բոլոր հնարավոր բնութագրիչների շարքը» (էջ 84):

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Իրավաքաղաքական խոսույթում գործառող ճշմարիտի հակոտնյաներ»: Այս գլխի առաջին ենթագլխում ատենախոսը պնդում է, որ իրավաքաղաքական գործընթացներում ճշմարիտն անհրաժեշտ է, իսկ արդարությունը՝ «պիտո»: Իրավաքաղաքական գործընթացները ռեսուրսների բաշխման, կոնֆլիկտների հաղթահարման գործընթացներ են: Իսկ այս գործընթացները պահանջում են արդարություն: Հեղինակը չի հստակեցնում, թե ինչ նկատի ունի «արդարություն» ասելով: Այստեղ նա առանձնացնում է բարոյագիտական երեք տեսություն՝ ունիվերսալիզմ, կոնտեքստուալիզմ և պարտիկուլյարիզմ, որոնք կարող են բացահայտել, թե ինչ է արդարությունը և պնդում, թե երեք տեսություններն էլ ունեն «ճշմարտություն» հասկացության կարիքը:

Հաջորդ ենթագլխում, որը վերնագրված է «Ճշմարիտի հակոտնյա լեգիտիմացված մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» հեղինակը մշակում է «ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա» հասկացությունը և ներկայացնում թե ինչպես կարող է ճշմարիտի ինչ-որ հակոտնյա լեգիտիմացվել: Ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյան մի սխալ պնդում է, որի սխալ լինելու մասին գիտեն և՛ այդ պնդումը կատարողը, և՛ այդ պնդման հասցեատերը, սակայն ոչ ոք այդ պնդման սխալ լինելու հանգամանքը չի բարձրաձայնում: Ոչ ոք այդ պնդման սխալ լինելը չի բարձրաձայնում, քանի որ այդ սխալի մասին բարձրաձայնելը հղի է հույժ անցանկալի հետևանքներով, կամ այդ սխալը շրջանառությունը տվյալ համայնքում ձեռնտու է: Ըստ ատենախոսի. « ... ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյայի ընդունման պատճառներն են. անելանելի դրության առկայությունը և/կամ շահերի համընկնումը» (էջ 114): Որքան նման սխալները երկար են շրջանառում հասարակության մեջ, այնքան ավելի ամրապնդվում, այնքան ավելի «լեգիտիմանում» են և այնքան ավելի դժվարանում է սրանց դեմ խոսելը: Որպես ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյայի օրինակներ հեղինակը ներկայացնում է հետևյալ դրույթները. ա) ինքնասպանության հոգեբանությունը գիտություն է, բ) գիտությունը կարող է ապացուցել/հերքել աստծո գոյությունը:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում, որը վերնագրված է «Դեմոկրատիայի արդար լինելու պնդումը որպես ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա մտակառույց», հեղինակը պնդում է, որ դեմոկրատիան արդար չէ և այն, թե դեմոկրատիան արդար է, ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա է: Իր այս թեզի օգտին նա ներկայացնում է անարխիզմի օգտին մի քանի փաստարկներ:

Աշխատության վերջին ենթագլուխը վերնագրված է «Ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաների օրինակներ հայկական (ներքին և արտաքին) իրավաքաղաքական խոսույթում»: Այստեղ ատենախոսը կենտրոնանում է Ղարաբաղյան հիմնախնդրի վրա և փորձում առանձնացնել հիմնախնդրի վերաբերյալ հայաստանյան քննարկումների մաս կազմող ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաներ:

Ատենախոսին հաջողվել է ուսումնասիրել ծավալուն մասնագիտական գրականություն և համադրել իմացաբանական, քաղ. փիլիսոփայական և քաղաքագիտական բազմաթիվ մոտեցումներ և գաղափարներ: Այս հանգամանքն

անտենախոսությունը դարձնում է ուշադրության արժանի: Հատկապես հետաքրքիր և գիտական առումով արժեքավոր է ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա հասկացության մշակումը, որը, հավանաբար կարելի է համարել ատենախոսության կարևորագույն նվաճումը:

Չնայած ատենախոսի կատարած ծավալուն աշխատանքին, մեր կարծիքով ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք սխալներ և/կամ վիճելի պնդումներ: Առանձնացնենք դրանցից ամենակարևորները.

ա/ Ինչպես վերը նշվեց, ըստ ատենախոսի՝ սահմանումներն ունեն ճշմարտության արժեք: Պարզ չէ, թե ինչու է հեղինակն այս կարծիքը պաշտպանում՝ դեմ գնալով գիտնականների շրջանում տարածված այն կարծիքին, որ սահմանումը չի կարող ունենալ ճշմարտության արժեք: Այս հանգամանքն էլ ավելի զարմանալի է դառնում, երբ հաշվի ենք առնում այն, որ հեղինակը վկայակոչում է տրամաբանության երկու դասագրքեր՝ Գևորգյան Հ. Ա., Բաղդասարյան Վ. Խ., Տրամաբանություն, Եր., «Էդիթ Պրինտ», 2015, 272 էջ, որում սահմանումը համարվում է «գործողություն» (էջ 42) և Բրուտյան Գ. Ա., Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար, Եր., «Երևանի համլս.», 1987, 540 էջ: որում սահմանումը համարվում է «հնար ..., որը կատարում է խնդիրներ» (էջ 74): Ոչ Գևորգյանն ու Բաղդասարյանը, և ոչ էլ Բրուտյանը չեն ընդունի, որ սահմանումն ունի ճշմարտության արժեք: Իսկ եթե սահմանումները չունեն ճշմարտության արժեք, ապա ճշմարիտը սահմանելու հնարավորության դեմ ատենախոսի հիմնական փաստարկն ամուր չէ՝ նրա նախադրյալներից մեկը սխալ է:

բ/ Ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք պնդումներ, որոնք ատենախոսության մեջ հավուր պատշաճին հիմնավորված չեն և որոնք, մեր կարծիքով պարզապես սխալ են: Ահա նման երեք պնդում պնդում.

1. Ատենախոսը պնդում է. «... ցանկացած հասկացության հատկանիշի հատկանիշ ինքնըստինքյան նաև տվյալ հասկացության հատկանիշն է, այնպես էլ ցանկացած մտակառույցի բնութագրիչի բնութագրիչ ինքնըստինքյան նաև տվյալ մտակառույցի բնութագրիչն է» (էջ 31): Այս պնդման վերաբերյալ բազմաթիվ հարցեր կարելի է առանձնացնել. Նախ, ինչ է հասկացության հատկանիշը: Օրինակ, «եռանկյուն» հասկացությունն ինչպիսի՞ հատկանիշներ ունի: Հասկացությունները կարող են լինել եզակի և ընդհանուր, հարաբերական և բացարձակ, հավաքական և ոչ-հավաքական և այլն: «Եռանկյուն» հասկացությունը բացարձակ հասկացություն է: Իսկ այդ հատկանիշն ինչպիսի՞ հատկանիշներ կարող է ունենալ: Սա պարզ չէ: Իսկ արդյո՞ք «բացարձակը» եռանկյան հատկանիշ է: Իհարկե, ոչ: Ուստի հասկացության հատկանիշի հատկանիշը, հասկացության հատկանիշ չէ: Համանման կերպով մտակառույցի բնութագրչիչ բնութագրիչը, բնականաբար «ինքնըստինքյան նաև տվյալ մտակառույցի բնութագրիչ» չէ:

2. Ատենախոսը պնդում է, թե միֆը և նարատիվը ենթակա չեն ճշմարիտ/կեղծ (սխալ, սուտ, մոլորություն) չափմանը: Այսինքն՝ միֆը և նարատիվը չեն կարող լինել ճշմարիտ կամ սխալ (էջ 74): Այս տեսակետի օգտին բավարար փաստարկներ չի ներկայացվում:
3. Ներկայացնենք մի վերջին օրինակ: Ինչպես վերը նշվեց, ըստ ատենախոսի այն, որ գիտությունը կարող է ապացուցել կամ հերքել Աստծո գոյությունը կամ կրոնական ինչ-ինչ դրույթներ ճշմարտության լեգիտիմացված հակոտնյա է (էջ 124-126): Այսինքն՝

և այս պնդումը կատարողը, և պնդումը լսողները գիտեն, որ սա սխալ է, բայց չեն կարող սրա դեմ առարկել՝ սա «լեգիտիմացած» է քանի որ ծագել է կամ «անելանելի դրության ... և/կամ շահերի համընկնելու» հետևանքով: Նախ, ամենևին էլ ընդունելի չէ, որ խնդրո առարկա դրույթը լայն տարածում ունի: Չէ՞ որ հենց ատենախոսի կողմից վկայակոչված ֆալսիֆիկացիայի սկզբունքի հանրահռչակումից հետո, փիլիսոփաների շրջանում լայն տարածում ունի գիտության և մետաֆիզիկայի տարանջատման վերաբերյալ զգուշավորությունը: Երկրորդ, միթե բազմաթիվ չեն այն հեղինակները, ովքեր ատենախոսի հետ համաձայն են՝ գիտությունը չի կարող ապացուցել կամ հերքել Աստծո գոյությունը կամ կրոնական ինչ-ինչ դրույթներ: Վերջապես, եթե ընդունենք ատենախոսի ներմուծած եզրույթը, այս դրույթը չենք կարող համարել ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա, քանի որ բավարար հիմք չկա, որ պնդելու, որ բոլորը գիտեն, որ այս դրույթը սխալ է և որ այն ծագել և լայն շրջանառության մեջ է մտել «անելանելի դրության ... և/կամ շահերի համընկնելու» հետևանքով:

գ/ Ատենախոսը կիրառում է մի շարք արտահայտություններ, որոնք մեր կարծիքով կամ պետք է փոխարինվեն գիտնականների շրջանում հայտնի՝ գիտական հասկացություններով, կամ էլ ատենախոսության շրջանակներում ստանան հստակ սահմանումներ: Ներկայացնենք այդպիսի մի քանի արտահայտություն.

«էութենական կերպավորում» (էջ 11), «գոյութենական իմաստ» (էջ 11), «կանոնավոր դատողություն» (էջ 20), «ոչ կանոնավոր վերացարկում» (էջ 21),«ամբողջատիրական առաջնայնություն» (էջ 49), «էութենական հասկացություն» (էջ 58), «հատկութենական հասկացություն» (էջ 58), «գիտելիքի բնույթների տարբերակայնություն» (էջ 64), «իմաստավոր գոյություն» (էջ 71), «կրկնաբանական բացարձակություն» (էջ 75), «անընդհատ բազմաշերտ (վերա)կերպավորումներ» (էջ 106) և այլն:

Չնայած այս և մի շարք այլ խնդրահարույց կետերի, ատենախոսությունն ունի բազմաթիվ արժանիքներ, որոնք հիմք են տալիս պնդելու, որ հեղինակն արժանի է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

փ.գ.թ. Արշակ Բալայան 02.09.2023 թ.

Ստորագրությունը հաստատում եմ.

Ե ԴԿ գիտական քարտուղար